ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՅԳԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Թիվ _14

«08» փետրվարի 2017թ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ*

*ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ*

*ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 2017թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի ավագանու 2016 թվականի N 10-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին N 5-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ „54„ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ...
Մուտք թիվ 112.7/2063-17
«02» 02 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

« 06 »Փետրվարի 2017թ. թիվ 5- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և 83-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 2017 թվականի տարեսկզբի ազատ մնացորդները.
Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 767357 դրամ: Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 0,50 դրամ:
2017 թվականի հաստատված բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.
Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 767357 դրամը ուղղել նախորդ տարվա աշխատավարձի պարտքի մարմանը:
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 0.50 դրամն ուղղել 06.03.01 խումբ ենթախմբի 5113 հոդվածին:
2017 թվականի բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.
հողի հարկը ավելացնել 1202093 դրամով, փոխադրամիջոցների գույքահարկը ավելացնել 1000000 դրամով,հողի վարձակալության վճարը ավելացնել 796000 դրամով, Այլ գույքի վարձակալությունից մուտքերը ավելացնել 360000 դրամով:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում նախատեսել 600000դրամ

2017 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4111 հոդվածը ավելացնել 3525450 դրամով:

2.06 բաժնի 3 խմբի 1-ին դասի 5113 հոդվածը ավելացնել 600000 դրամով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ

1. Քոչարյան Անահիտ
2 .Հովհաննիսյան Տիգրան
3. Նիկոլյան Արսեն
4. Մկրտչյան Գայանե
5. Սմբատյան Սանասար
6. Մովսիսյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թվականի փետրվարի 6

Այգեվան համայնք

Հավելված N 1

ՀՀ Արմավիրի մարզի
Այգեվան համայնքի
ավագանու
2017թ.փետրվարի 6-ի
N5 -Ն որոշման

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
(մարզի անվանումը)

# ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

# 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է ԱՅԳԵՎԱՆ համայնքի
(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

ավագանու 2017_ թվականի փետրվարի 6-ի N5-Ն որոշմամբ
(ամիս ամսաթիվ)

ԱՐՄԱՎԻՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՉՅԱ ՀԵՆՐԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(անուն, հայրանուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 2017 թվականի փետրվարի 6 -ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի ավագանու 2016 թվականի N 10-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 5-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20- Ի N 10-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 5- Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 2017 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի ավագանու 2016 թվականի N 10 -Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N5-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի պահանջի կատարմամբ. համայնքի տվյալ տարվա բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը նախորդ տարվա բյուջեի կատարման ընթացքում ծախսերի նկատմամբ գերազանցել է, որն անհրաժեշտ է բաշխվել որոշման մեջ նշված ուղղություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ